ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

Ի պատասխան Ձեր 27.11.2023թ. գրության՝ «Մեգիել» ՍՊԸ-ի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ, տեղեկացվում է, որ ««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել են գնման գործընթացների աուդիտներ, մասնավորապես.

1.Երևանի քաղաքապետի 2020թ. հոկտեմբերի 2-ի N 1012–Ա կարգադրությամբ՝ թիվ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնման գործընթացի աուդիտ:

Աուդիտի արդյունքում պարզվել է, որ պայմանագրի կնքման օրվանից մինչև լուծարման օրը /13.03–26.06.2020թ./ ՀՀ կառավարության 16.03.2020թ-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործել է արտակարգ դրության ռեժիմ, որի հետևանքով Ընկերությունը չի կարողացել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության որևէ միջոց, քանի որ կնքված պայմանագրի 7-րդ կետով սահմանվել է, որ «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:»:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն իր հերթին օգտվելով պայմանագրի 7-րդ կետով սահմանված այն դրույթից, որ եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը, այդ մասին նախապես տեղյակ պահելով Ընկերությանը՝ միակողմանի լուծել է պայմանագիրը:

2.Երևանի քաղաքապետի 2021թ. փետրվարի 11-ի N 91-Ա կարգադրությամբ՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 2020-2021թթ. հաշվետու ժամանակահատվածի գնման գործընթացի աուդիտ:

3.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 23.1-րդ կետի և Երևանի քաղաքապետի 22.06.2021թ. հ.21/78387 հանձարարականի՝ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 և ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրերով ընթացակարգի գնման գործընթացի աուդիտ:

4.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 23.1-րդ կետի՝ 2023 թվականի ընթացքում թիվ ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/34 ծածկագրով ընթացակարգի գնման գործընթացի աուդիտ:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի N 3756-Ա որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 84-րդ կետերը՝ աուդիտորական առաջանդրանքների արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությունները տրամադրվել են ««Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, Երևանի քաղաքապետին և ներքին աուդիտի կոմիտեին:

Աուդիտորական առաջադրանքների արդյունքում բացահայտված թերությունների, անհամապատասխանությունների և բացթողումների վերաբերյալ Ընկերությանը տրվել են համապատասխան ցուցումներ արձանագրված խնդիրները շտկելու և գնման գործընթացները ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան իրականացնելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից առաջարկվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը քննարկել ««Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար գնումներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իրականացնելու նպատակով վերջինիս ընդգրկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 386-Ն որոշման ցանկում:

Արդյունքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և

Հայաս-տանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 386-Ն որոշման մեջ համաձայն 2022 թվականի փետրվարի 10-ի N 142-Ն որոշման կատարվել է փոփոխություն և Ընկերությունը ներառվել է գնումներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իրականացնող կազմակերպությունների ցանկում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի N 3756-Ա որոշմամբ հաստատված Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի 115-րդ և 116-րդ կետերի՝ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պաշտոնատար անձանիք Երևանի քաղաքապետի գրավոր թույլտվությամբ կարող են օգտվել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնում պահվող փաստաթղթերից ներկայացնելով հայտարարություն՝ փաստաթղթերը միայն ծառայողական նպատակներով օգտագործելու և Երևանի քաղաքապետարանի ներքին ընթացակարգերով սահմանված գաղտնիության և ապահովության, պահպանման և օգտագործման, ինչպես նաև առանց համապատասխան թույլտվության այլ անձանց տրամադրելու վերաբերյալ, իսկ 117-րդ կետի պահանջի՝ ներքին աուդիտի բաժնում պահպանվող փաստաթղթերը կարող են տրամադրվել Երևանի քաղաքապետարանից դուրս գտնվող անձանց միայն օրենքով սահմանված դեպքերում՝ Երևանի քաղաքապետի գրավոր թույլտվությամբ:

Նշվում է նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավապահ մարմինների պահանջով աուդիտորական հաշվետվությունները տրամադրվել են վերջիններիս:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ